ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՀՈՎՎԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Առաջնորդության Հովվական Խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) ստեղծման ***նպատակն է՝***

առավել արդյունավետ իրականացնել Առաջնորդության ընդհանուր հովվական առաքելությունը՝ սինոդական ոգով՝ ապահովելով Առաջնորդության տարածքում հովվական առաքելության մեջ ներգրավված անձանց և հաստատությունների առավել լայն և գործնական խորհրդակցական մասնակցությունը՝ Առաջնորդության առաքելության համար առաջնային կարևորություն ունեցող հարցերի քննարկման և որոշումների ընդունման մակարդակներում:

Խորհրդի ստեղծումը համահունչ է Կաթողիկէ Եկեղեցու որդեգրած սինոդական ճանապարհի սկզբունքներին. *սինոդականությունը* Եկեղեցու միասնականության արտահայտությունն է, որտեղ բոլորը՝ եպիսկոպոսները, քահանաները, վանականները, միաձնուհիները, աշխարհականները միասին են կատարում Քրիստոսի կողմից ավանդված առաքելությունը՝ հռչակելու Ավետարանը, քայլելու Քրիստոսի և միմյանց հետ հաղորդության և սիրո մեջ, սրբության ճանապարհով՝ դեպի փրկություն:

Խորհուրդը ստեղծվում է՝ հիմք ընդունելով.

- Արևելյան Եկեղեցիների Կանոնագրքի 4-րդ հոդվածի՝ 272-275-րդ կանոնները,

- «Հայ Կաթողիկէ Եկեղեցի կրոնական կազմակերպության» կանոնադրությունը,

- հովվական հարցերի, խնդիրների լուծման, մարտահրավերների հաղթահարման ճանապարհին հավատացյալների փորձառական և մասնագիտական խորհրդատվությամբ առաջնորդվելու անհրաժեշտությունը,

- որոշումների ընդունման մակարդակում հնարավորինս բոլոր խմբերի և հաստատությունների ներկայացուցիչների մասնակցայնության, միասնականության և առավելագույն համերաշխության անհրաժեշտությունը,

- Առաջնորդության լայնածավալ տարածքի համայնքների, ընտանիքների, անհատների հոգևոր և բարոյական առավել միասնական նկարագիր զարգացնելու անհրաժեշտությունը:

Դրույթներ

1. Խորհուրդը, եպիսկոպոսի Առաջնորդությամբ և արտոնությամբ, պետք է ուսումնասիրի և իր եզրակացությունները հայտնի Առաջնորդության հովվական աշխատանքների, խնդիրների և մարտահրավերների վերաբերյալ: *Տե՛ս՝ ԱԵԿ, Կանոն 272*

2. Խորհուրդը զուտ խորհրդակցական մարմին է և որոշումներ չի կայացնում, այլ ներկայացնում է միայն եզրակացություններ, լուծումներ, ծրագրային առաջարկներ: *Տե՛ս՝ ԱԵԿ, Կանոն 273, §1*

3. Խորհուրդը պետք է բաղկացած լինի հոգևորականներից, վանական միաբանությունների անդամներից, և, հատկապես, աշխարհականներից՝ այնպես, որ Խորհրդում հնարավոր առավելագույն չափով ներկայացված լինեն Առաջնորդության մեջ գործող բոլոր հաստատությունները, հասարակությունները և խմբերը: *Տե՛ս՝ ԱԵԿ, Կանոն 273, §1, 2*

4. Խորհրդի անդամներ կարող են լինել միայն հավատքով, գովելի բարոյական նկարագրով և առաքինի անձինք: *Տե՛ս՝ ԱԵԿ, Կանոն 273, §4*

5. Խորհրդի նախագահը Առաջնորդ Վիճակավոր Արքեպիսկոպոսն է: *Տե՛ս՝ ԱԵԿ, Կանոն 275*

6. Երբ Առաջնորդական Աթոռը թափուր է, Խորհուրդը դադարում է գոյություն ունենալուց՝ մինչև նոր Առաջնորդի որոշումը: *Տե՛ս՝ ԱԵԿ, Կանոն 274, §2*

7. Միայն Առաջնորդ Արքեպիսկոպոսը կարող է գումարել Խորհրդի նիստեր՝ ըստ հովվական անհրաժեշտությունների, նախագահել նիստերին և հրապարակել նիստերի ընթացքում քննարկված նյութերը: *Տե՛ս՝ ԱԵԿ, Կանոն 275*

8. Խորհրդի հերթական նիստերը գումարվում են յուրաքանչյուր 6 ամիսը մեկ անգամ:

9. Խորհրդի արտահերթ նիստերը կարող են գումարվել ըստ Առաջնորդի որոշման:

Երևան, Հայ Կաթողիկէ Առաջնորդարան, 23 մայիսի, 2026թ.

Հաստատում եմ՝

✠ ԳԷՈՐԳ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ
Տիտղոսաւոր Արքեպիսկոպոս Սեբաստիոյ Հայոց
Առաջնորդ Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի
եւ Արեւելեան Եւրոպայի Կաթողիկէ Հայոց

Տ. ՅՈՎՍԷՓ ՔՀՆՅ. ԳԱԼՍՏԵԱՆ
Դիւանապետ Առաջնորդութեան

ՀՀ, ք. Գիւմրի - 3104, Աթարբեկեան փող. 82, Հեռ. (+374 312) 52115, էլ. փոստ՝ armorda@web.am / Atarbekyan str. 82, 3104 – Gyumri, RA, Tel.: (+374 312) 52115, E-mail: armorda@web.am
ՀՀ, ք. Երեւան – 0052, Թբիլիսեան խճուղի 1/3, Հեռ. (+374 10) 280577 / Tbilissian Avenue, side str. 1/3, 0052 - Yerevan, RA, Tel.: (+374 10) 280577